

ԱՐՉԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԵՎ

ԹՈՒՐԹԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ

ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՍԱՏՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունը և Թուրքիայի Հանրապետությունը,

ձգտելով հաստատել բարիդրացիական հարաբերություններ և զարգացնել երկկողմ համագործակցությունը քաղաքական, տնտեսական, մշակութային և այլ ոլորտներում, ի շահ իրենց ժողովուրդների՝ համաձայն հարաբերությունների զարգացման մասին նույն օրը ստորագրված Արձանագրության,

վկայակոչելով Միավորված ազգերի կազմակերպության Կանոնադրությամբ, Հելսինկյան եզրափակիչ ակտով, Նոր Եվրոպայի համար փարիզյան խարտիայով իրենց ստանձնած պարտավորությունները,

վերահաստատելով իրենց երկկողմ և միջազգային հարաբերություններում հավասարության, ինքնիշխանության, այլ պետությունների ներքին գործերին չմիջամտելու, տարածքային ամբողջականության և սահմանների անխախտելիության սկզբունքները հարգելու և հարգումը երաշխավորելու իրենց հանձնառությունը,

հաշվի առնելով ամբողջ տարածաշրջանում խաղաղության, անվտանգության և կայունության ամրապնդմանը նպաստող՝ երկու երկրների միջև հավատի և վստահության մթնոլորտ ստեղծելու և պահպանելու կարևորությունը, ինչպես նաև վճռական լինելով զերծ մնալ ուժի կիրառումից կամ այն կիրառելու սպառնալիքից, խրախուսել վճռերի խաղաղ կարգավորումը, պաշտպանել մարդու իրավունքները և հիմնարար ազատությունները,

հաստատելով երկու երկրների միջև գոյություն ունեցող սահմանի փոխադրծ ճանաչումը, ինչպես սահմանված է միջազգային իրավունքի համապատասխան պայմանագրերով,

կարևորելով ընդհանուր սահմանը քացելու իրենց որոշումը,

վերահաստատելով իրենց հանձնառությունը՝ ձեռնպահ մնալ բարիդրացիական հարաբերությունների ոգուն չհամապատասխանող քաղաքականություն վարելուց,

դատապարտելով ահաբեկչության, բռնության և ծայրահեղականության բոլոր ձևերը՝ անկախ դրանց պատճառներից, խոստանալով ձեռնպահ մնալ նման

գործողությունները խրախուսելուց ու հանդուրժելուց և համագործակցել դրանց դեմ պայքարում,


հաստատելով ընդհանուր շահերի, բարի կամքի վրա հիմնված հարաբերությունների նոր ձևեր ու ուղիներ մշակելու և խաղաղության, փոխըմբռնման ու ներդաշնակության ձգտելու իրենց պատրաստակամությունը,

համաձայնեցին հաստատել դիվանագիտական հարաբերություններ՝ Դիվանագիտական հարաբերությունների մասին Վիեննայի 1961 թվականի կոնվենցիային համապատասխան, սույն Արձանագրության ուժի մեջ մտնելու օրվանից և փոխանակել դիվանագիտական ներկայացուցչություններ:

Սույն Արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության և Թուրքիայի Հանրապետության միջև հարաբերությունների զարգացման մասին Արձանագրությունն ուժի մեջ են մտնում նույն օրը՝ վավերագրերի փոխանակմանը հաջորդող առաջին ամսվա առաջին օրը:

Ստորագրված է Ցյուրիխ քաղաքում 2009 թվականի հոկտեմբերի 10-ին, հայերեն, բուրբերեն և անգլերեն հավասարազոր երկու բնօրինակներով: Սեկնարանության տարբերության դեպքում անգլերեն տեքստը կզերակայի:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝**



**ԷԴՎԱՐԴ ՆԱԲԱՆԴՅԱՆ
ԱՐՏԱԼԵՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**

**ԹՈՒՐԿԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՂՄԻՑ՝**



**ԱՀՄԵՏ ԴԱՎՈՒԹՕՂՈՒ
ԱՐՏԱԼԵՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ**